ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

04.02.2019 N ԿՀ/06.2/1289-19
Ձեր N _____

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
E-mail: foi@foi.am

Հարգելի տիկին Դոյդոյան

2019 թվականի հունվարի 29-ի Ձեր թիվ 341-04 հարցման կապակցությամբ հայտնում եմ հետևյալը.

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի համաձայն՝ պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատավարձը կազմված է նույն օրենքով սահմանված հիմնական աշխատավարձից, լրացուցիչ աշխատավարձից և պարգևատրումներից: Ընդ որում՝ լրացուցիչ աշխատավարձը ներառում է հավելումները և հավելավճարները: Միաժամանակ, նույն օրենքի համաձայն՝ վերոնշյալ անձանց պարգևատրումը կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված պարգևատրման ֆոնդից, աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից, տվյալ մարմնի նյութական խրախուսման և զարգացման ֆոնդի միջոցներից, աշխատանքների փորձարարական կազմակերպման համար օպտիմալացված միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր՝ մինչև մեկ

ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տարեկան ոչ ավելի, քան 3 անգամ:

2016 և 2017 թվականների դեկտեմբեր ամիսներին աշխատակիցներին վճարված պարգևավճարների հետ կապված հայտնում եմ, որ վճարումները կատարվել են գործող օրենսդրական հնարավորությունների շրջանակներում: 2018 թվականի ընթացում առողջապահության նախարարության աշխատակիցները պարգևատրվել են միայն մեկ անգամ՝ տարեվերջին, ընդ որում՝ թվով 184 աշխատակից պարգևատրվել է հավասարաչափ՝ օրենքով սահմանված առավելագույն թույլատրելի սահմանաչափից պակաս:

Ինչ վերաբերում է պարգևատրման չափերի վերաբերյալ Ձեր հարցմանը՝ հարկ է նշել հետևյալը.

Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 134-րդ և 199-րդ հոդվածների համաձայն՝ վերոնշյալ տվյալը համարվում է անձնական տվյալ, իսկ աշխատողի անձնական տվյալները փոխանցելիս գործատուն պարտավոր է աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է աշխատողի կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը կանխելու համար, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂ՝ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Մանյա Մխիթարյան
Հաշվապահական հաշվառման բաժին
Հեռ՝ 060-808003 / 1801